



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ՄՈՆԹԵՊԵՆՆՈՅԻ Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, 6 Փետրուարին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Ս. Պատարագին, պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը եւ պիտի նախագահէ եկեղեցւոյ Տիկնանց Միութեան հին եւ նոր ննջեցեալներուն հոգեհանգստեան արարողութեան:

### PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT HOLY CROSS CATHEDRAL

On Sunday, February 6<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon at Holy Cross Cathedral in Montebello.

During the requiem service, prayers will be offered for the souls of departed Ladies Aid members.

\*\*\*

### ՍՓԻՒՔԻ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈՒԲԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ



Սփիւռքի նախարար  
Հրանոյշ Յակոբեան  
Չորեքշաբթի, 2 Փետրուարի  
յետմիջօրէին այցելեց  
Ազգային Առաջնորդարան  
եւ դիմաւորուեցաւ Թեմիս  
բարեխնամ Առաջնորդ  
Բարձր. Տ. Մուշեղ Արք.  
Մարտիրոսեանի ու  
Ժողովականութեան  
ներկայացուցիչներու կողմէ:  
Նախարարուհիին  
կ'ընկերանային

Հայաստանի գլխավոր հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննիսեան եւ հիւպատոս Մետրոպ Շապոյեան, իսկ Առաջնորդ Սրբազանին կողքին էին Կոստական Ժողովի անդամներէն Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան, Յոզ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան, Արժ. Տ. Արտակ Քհնյ. Տեմիրճեան, Ազգային Վարչութեան անդամներէն՝ Տիկին Ռիմա Պողոսեան, Տեարք Վահան Պզտիկեան, Խաչիկ Երեցեան եւ Սագօ Շիրիքեան, Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան տարածման յանձնախումբի ատենապետ Տիար Հրայր Ճերմակեան եւ Տիկնանց Օժանդակ Մարմինի անդամներէն Տիկնայք Մարիամ Կարապետեան, Ծովիկ Չէյթլեան եւ Սալբի Սրուբեան: Ներկայ էր նաեւ Բ.Յ.Դ. Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կեդր. կոմիտէի անդամներէն Տիար Մարտիկ Կապուտեան:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց յարգելի հիւրերը, յատկապէս նախարարուհին, որուն այս այցելութիւնը մարմնաւորուեցաւ բարի եւ ուրախալի լուրով մը, այն՝ որ Հայաստանի մէջ մտածում կայ ունենալու խորհրդարանի վերին պալատ մը՝ Ծերակոյտ, որուն մասնակից ըլլան նաեւ սփիւռքի հայութեան ներկայացուցիչներ: Առաջնորդ Սրբազանը այս առաջադրանքին մէջ տեսաւ հայրենիքին ու արտերկրի հայութեան միջեւ գործակցութեան զարգացման եւ կամուրջներու ամրապնդման յենարան մը:



Խօսակցութիւնը զարգացաւ հայրենական հարցերով ու կեդրոնացաւ յատկապէս սփիւռքի նախարարութեան ծրագիրներուն վրայ, որոնց մասին ընդհանուր տեղեկութիւններ տուաւ նախարարուհին, միաժամանակ լուսաբանական բացատրութիւններ տալով ներկաներու հարցումներուն: Ան առաջին հերթին գոհունակութիւն յայտնեց, որ իր այս այցելութիւնը կը զուգարհիպի երկրորդ

կարեւոր լուրի մը, նկատի ունենալով, որ առաջին այցելութեան առիթով տրուած էր Սփիւռքի նախարարութեան ստեղծման լուրը: Ան կանգ առաւ Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ օղակներու գոյառման ու անոնց ամրապնդման կարեւորութեան վրայ, նշելով, որ այս գծով, պէտք է գնահատել հայրենի պետութեան առած քայլերը:

Անդրադառնալէ ետք Հայաստանի վերանկախացումէն ասդին հայութեան կտրած հանգրուաններուն, ան կեդրոնացաւ Սփիւռքի նախարարութեան աշխատանքներուն ու գործի դաշտերուն վրայ: Բ. Յակոբեան նշեց, որ մշակուած են ու գործադրութեան դրուած՝ բազմաթիւ ու բազմաճիւղ ծրագիրներ, որոնց մէջ սփիւռքէն գործակցական ներդրում ապահովուած է: Այս առումով, ան վեր առաւ մեր եկեղեցւոյ,

կուսակցութեանց ու միութիւններուն դերակատարութիւնը եւ գործակցութիւնը: Ան անդրադարձաւ տարբեր գաղութներու առանձնայատկութիւններուն, նշելով, որ Բալիֆորնիան ներկայիս կը հանդիսանայ, Ռուսիայէն ետք, սփիւռքեան մեծագոյն գաղութը, որ նաեւ կազմակերպ վիճակ ունի: Ան յայտնեց, թէ նախարարութիւնը իր դիմաց ունի առաջնահերթութիւններ, ինչպէս՝ հայապահպանում, սփիւռքագէտներու պատրաստութիւն, Յայաստան-Սփիւռք փոխադարձ ճանաչողութեան ու վստահութեան զարգացում, «Երիտասարդութեան Տարի» եւ այդ ծիրին մէջ գործնական ծրագիրներու հետապնդում, գիրքերու հրատարակութիւն, համերգներ եւայլն: Այս ծիրին մէջ, ան յիշատակեց սփիւռքեան կառոյցներու հետ գործակցութիւնը:

Սրտի խօսք արտասանեց Յայաստանի գլխաւոր հիւպատոսը, վկայելով, որ նախարարուհիին խանդավառութիւնը վարակիչ է ու համապատասխան մթնոլորտ կը ստեղծէ իր այցելած օճախներուն մէջ: Ան շնորհակալութեան խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազանին ու հիւպատոսութեան հետ գործակցող բոլոր միաւորներուն, որոնք կը նպաստեն այս աշխատանքներուն զարգացման:

Ողջոյնի խօսք մը ուղղեց նաեւ Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան. ան յիշեց նախարարուհիին հետ իր առաջին ու յաջորդական հանդիպումներէն քաղած տպաւորութիւնները, դրուատելով անոր ջերմ ու խանդավառ վերաբերմունքը: Ան շեշտեց, որ Յայաստանի եւ Սփիւռքի միջեւ կազմուող կամուրջները պետք է ամրապնդել հաստատ հիմքերու վրայ, որուն համար փոխադարձ ըմբռնումն ու անկեղծ գործակցութիւնը կենսական են եւ նպաստ կը բերեն մեր հայրենիքին:

Տիար Մարտիկ Կապուտեան նկատեց, որ նախարարուհիին այցելութիւնները ընդհանրապէս կարճատեւ կ'ըլլան, մինչդէռ ցանկալի է, որ անոր յաջորդ այցելութիւնները տարածուին աւելի երկար ժամանակի վրայ, որպէսզի առիթ ունենայ աշխատանքային հանդիպումներ ունենալու մեր գաղութի տարբեր միաւորներուն հետ, ինչ որ պիտի նպաստէ փոխադարձ ճանաչողութեան եւ գաղութի իրականութիւններէն ու կարիքներէն բխող ծրագիրներու մշակման:

Ողջոյնի խօսք արտասանեց նաեւ Տիկնանց Օժանդակ Մարմինի ատենապետուհի Տիկին Մարիամ Կարապետեան, որ կանգ առաւ յատկապէս սփիւռքեան գաղութները մաշումի տանող խառն ամուսնութիւններէն բխող մտահոգութեան վրայ:

Պաշտօնական խօսքերէն ետք, տեղի ունեցաւ խորհրդակցական գրոյց, որուն ընթացքին ներկաները կանգ առին փորձառութիւններու փոխանակման կարելորութեան եւ հայութիւնը տագնապեցնող կամ գոհունակութիւն առթող երեւոյթներու վրայ:

Աւելի քան ժամ մը տեւած հանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազանը շնորհակալութեան խօսք ուղղեց նախարարուհիին, այս այցելութեան ու հոգեշահ գրոյցին համար: Ապա, նախարարուհին եւ Առաջնորդ Սրբազանը յուշանուէրներ փոխանակեցին:

**DIASPORA MINISTER HRANUSH HAKOBYAN  
VISITS THE PRELACY**



On Wednesday, February 2<sup>nd</sup>, 2011, Her Excellency Hranush Hakobyan, Republic of Armenia Minister of Diaspora Affairs visited the Prelacy where she was welcomed by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and councils' members.

The Minister was accompanied by Consul General of Armenia the

Honorable Grigor Hovhannissian, and Deputy Consul the Honorable Mesrop Shaboyan. The Prelate was joined by Religious Council divan members Very Rev. Fathers Muron Aznikian, Very Rev. Fr. Barthev Gulumian and Rev. Fr. Ardak Demirjian, Executive Council Chair Mrs. Rima Boghossian and members Mr. Vahan Bezdikian, Mr. Khatchig Yeretzian, and Mr. Sako Shirikian, Outreach Committee Chair Mr. Herair Jermakian, Ladies Auxiliary Chair Mrs. Mariam Karapetian and members Mrs. Dzovig Zetlian and Mrs. Salpi Srourian. ARF Central Committee member Mr. Mardig Gaboudian also participated in the meeting.

The Prelate greeted the Minister, noting that with her visit she brings good news. At her first visit to the Prelacy, she had announced the establishment of the Ministry of Diaspora. At this visit, she announced that there is thought of establishing a Senate within Armenia's Parliament which can include Diaspora Armenians. The Prelate added that this will be a great step towards bridging Diaspora Armenians with Armenia and strengthening collaboration.

Mrs. Hakobyan spoke in great detail about the projects and activities foreseen by the Ministry of Diaspora and of plans that are already underway. The primary focus is to strengthen ties between Armenia and the Diaspora and for both communities to better understand and relate to one another, which will be achieved through wide-ranging projects and which will include the input and collaborative efforts of the Diaspora, whether church, political parties, or cultural organizations.

In his remarks, Consul General Grigor Hovhannissian thanked the Prelate and the individuals and organizations who through their support and collaboration with the Consulate General of Armenia, help to advance the mission of the Ministry of Diaspora.

Executive Council Chair Mrs. Rima Boghossian stressed that the bonds and bridge between Armenia and the Diaspora must be built on a strong foundation, and this can only be achieved through mutual understanding, respect, and open and honest communication and cooperation.

Mr. Mardig Gaboudian expressed his wish for a working visit with the many organizations and associations that serve in our community so that she

would get a better picture of the day to day life of the community and its endeavors.

Ladies Auxiliary Chair Mrs. Mariam Karapetian spoke of some of the issues facing the Diaspora and concerns such as an increase in the number of mixed marriages.

At the conclusion of the visit, the Prelate once again thanked Minister Hranush Hakobyan for the visit and productive discussions, and an exchange of mementos followed.

\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ԱՅՅԵԼԵՑ ՖՐԵՉԼՈՅԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ

- ՏՕՆԱԽՄՐՈՒՄ՝ ԵԿԵՂԵՑՈՅ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 110ՐԴ ՏԱՐԵԴԱՐԶԻՆ



Կիրակի, 30  
Յունուարին, Թեմիս  
բարեխնամ Առաջնորդ  
Բարձր. Ս. Մուշեղ Արք.  
Մարտիրոսեան  
հանդիսապետեց Ֆրեզլոյի  
Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ  
Սուրբ Պատարագին եւ  
փոխանցեց օրուան  
խորհուրդը ներկայացնող  
իր պատգամը:  
Ս. Պատարագը  
մատուցեց եկեղեցւոյ

հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վահան Զինյ. Կոստանեան:

Առաջնորդ Սրբազանը, Ազգ. Վարչութեան եւ հոգաբարձութեան ներկայացուցիչներուն ընկերակցութեամբ նախ եւ առաջ այցելեց Կիրակնօրեայ դպրոց, ուր տնօրէնութիւնն ու ուսուցչական կազմը դիմաւորեցին զինք եւ ծանօթացման պահ մը ունեցան: Բարի գալուստի խօսք արտասանեց հոգաբարձութեան անդամներէն բարեշնորհ Կարօ Սարկաւազ Փօլատեան:

Ապա, Առաջնորդ Սրբազան Հայրը իր պատգամը տուաւ աշակերտներուն, կեդրոնաձևով Հայ Մանուկի Տարուան խորհուրդին վրայ:

Աշակերտները զանազան հարցումներ հարցուցին, որոնց Սրբազանը պատասխանեց համբերութեամբ եւ մեծ հետաքրքրութիւն արթնցնելով անոնց մէջ:

Հանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազանը նուէրներու հետ, իր օրհնութիւնները բաշխեց անոնց:

Եկեղեցական արարողութենէն վերջ, եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ 110-րդ տարեդարձին նուիրուած ճաշկերոյթը: Իրագործուեցաւ կոկիկ յայտագիր մը:



Հովին ու հոգաբարձութիւնը, ըստ տարիներու բարի աւանդութեան, յուշանուէրներով պատուեցին ու գնահատեցին եկեղեցւոյ անձնդիր ծառայողները: Առաջնորդ Սրբազան Հայրը փոխանցեց իր օրհնութեան խօսքը:

Ձեռնարկին ներկայ էին Ազգային Վարչութեան անդամ Պիլ Սաաթճեան եւ ժողովականութեան անդամներ:

## **PRELATE VISITS HOLY TRINITY CHURCH OF FRESNO AND PRESIDES OVER 110<sup>TH</sup> ANNIVERSARY CELEBRATION**



On Sunday, January 30<sup>th</sup>, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited the parish community of Holy Trinity Church of Fresno where he met with Sunday School teachers and students, presided over Divine Liturgy and the 110<sup>th</sup> anniversary banquet.

The day began with a visit to the Sunday School.

The Prelate, accompanied by Executive Council and Board of Trustees members, was welcomed by the director and teachers, and following brief introductions, all headed to the hall where the students had assembled.

Welcoming remarks were delivered by Board of Trustees member Deacon Garo Poladian.

The Prelate delivered his blessings and message to the students, and offered answers and explanations to the many questions the students put forth.

At the end of the visit, the Prelate presented the students with mementos.

Divine Liturgy was celebrated by Parish Pastor Rev. Fr. Vahan Gosdanian. The Prelate delivered the sermon.

Following the church service, the 110<sup>th</sup> anniversary of the church was celebrated. An artistic program took place and servants of the church were commended and recognized for their service.

The Prelate presided over the banquet and delivered his message.

Executive Council member Mr. Bill Sahatdjian participated in the day's events.

\*\*\*